ՀՆԱՏԻՊ ՄԻ «ՍԱՂՄՈՍԱՐԱՆ»

«Սաղմոս»ը կամ «Սաղմոսարան»ը այն գրքերից է, որ միշտ արժանացել է հայ տպագրիչների ուշադրութեան եւ տպագրուել բազմաթիւ անգամներ: Նոյնիսկ կարծիք կայ, որ հայերէն առաջին տպագիր գրքերից՝ «Ուրբաթատետր»ից առաջ, որ տպագրուել է 1512 թուին, տպագրուած է եղել մի «Սաղմոսարան»: Նոյնպէս էլ փաստ է արդէն, որ Նոր Ջուղայում 1638 թուին, առաջին անգամ Իրանում եւ Նոր Ջուղայում տպագրուած գիրքը, եղել է Սաղմոսը:

Այստեղ մեր նպատակը չէ խօսել Սաղմոսի տպագրութիւնների մասին[1], այլ՝ հնատիպ մի Սաղմոսի, որ տպագրուել է 1787 թուին Կոստանդնուպոլսում եւ անգամ յիշուած է «Հայ Գիրքը 1512–1800 թուականներին» կոթողական աշխատութեան մէջ (Երեւան, 1988 թ., էջ 596, համար 799), բայց ձեռքի տակ չունենալով գիրքը, նկարագրութիւնը բերուած չէ լրիւ ձեւով: Դրա մասին համառօտ ձեւով յիշուած է նաեւ «Հասկ» ամսագրի մէջ (1970 թ. Սեպտ.–Հոկտ., էջ 379):

Ստորեւ բերում ենք դրա լրիւ նկարագրութիւնը:

Տիտղոսաթերթ.

«Սաղմոս Դաւթի որ կոչի Սաղմոսարան: Տպագրեցեալ ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Գերերջանիկ Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի Տեառն Յովակիմայ ճգնազգեաց վարդապետի:

Իսկ եւ վեհափառ հրամանաւ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Պատրիարգի Տեառն Զաքարիայ Ազգասէր եւ Աստուածաբան վարդապետի եւ արքեպիսկոպոսի:

Ի թուին Հայոց՝ ՌՄԼԶ: Փետրվարի ԻԲ ի տպարանի Յոհաննիսի եւ Պօղոսի»[2]:

1. Սաղմոսի տպագրութիւնների մասին հանգամանօրէն խօսուել է Յ. Անասեանի «Հայկական Մատենագիտութիւն» գրքում, Բ. հատ., Երեւան, 1976 թ., էջ 382–446, ուր այս տպագրութեան մասին յիշուած չէ:

2. Գրութիւնը բերուած է նոյնութեամբ, միայն լրացուած կամ բացուած են կրճատագրերը:

digitised by

Ունի 344 համարակալուած եւ ութը չհամարակալուած էջ, եւ մի քանի առանձին համարակալուած էջեր: Չհամարակալուածի առաջին էջը ՌՄԼԶ-ՌՄԿԹ թուերի դիր տարւոյն, եօթներեակ, վերադիր եւ տանուտէր-երն են, միւս վեց էջը՝ տարեգրերի տօնացոյցը, իսկ վերջին էջը գրքի յիշատակարանը, որ բերում ենք ստորեւ.

«Յիշատակարան տպողի:

Փառք պատիւ եւ երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեան եւ միոյ աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Տպագրեցեալ եղեւ Սաղմոսարանս բարեխօսութեամբ արագահոս եւ երջանիկ վկային Քրիստոսի սրբոյն Մինասայ ի վայելումն մանկանց Սիօնի:

Արդ՝ որք մատուցանիցէք սովաւ զպաշտօն օրհնաբանութեան առ բարձրեալն Աստուած, յիշեսջիք ի մաքուր մաղթանս ձեր ըզհանգուցեալ հայրն իմ զԱստուածատուր. եւ զիս զորդի նորին՝ զՅովհաննէս, հանդերձ յոգնաշխատ որդւովն իմով տիրացու Պօղոսիւ՝ եւ զՅարութիւնիւ՝ զգիրս կապարեայս շարողիւ:

Յիշեսջիք եւ ըզմշակն գործարանիս զբալուոցի Վարդանն եւ զտիրացու Զաքարն, եւ դուք յիշեալ լինիք»[3]:

Յիշատակարանից յետոյ ունի առանձին էջակալութեամբ տարուայ ամիսների վրայով տօնացանկ, որ մեր ձեռքի տակ եղած գրքում կայ միայն ութն էջը՝ Յունուար, Փետրուար, Մարտ եւ Ապրիլ ամիսներինը, պակասաւոր մասերով եւ ետ ու առաջ կազմուած, վստահաբար ունեցել է նաեւ չուրջ 30 էջ, որ պակասում է այժմ:

Սաղմոսից յետոյ գրքում բերուած է նաեւ «Աղօթք Մանասէի թագաւորին», մի քանի աղօթքներ Ներսէս Շնորհալուց եւ Գրիգոր Նարեկացուց, ինչպէս եւ «Գովասանութիւն Սաղմոսացն Դաւթի» բանաստեղծութիւնը:

Գրքի երկրորդ էջում կայ Դաւթի մարգարէի նկարը, քնար նուագելիս, ինչպէս եւ մի քանի այլ նկարներ գրքի մէջ: Էջերն ունեն եզրազարդեր:

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

3. Յիշատակարանները բերուած են նոյնութեամբ, միայն բացուած են կրճատագրերը:

A.R.A.R.@